ԱՂԱՎՆԱՏՆԻՑ ՀԱՅՏՆԱԲԵՐՎԱԾ ԵՐԱԺԻՇՏԻ ԹՐԾԱԿԱՎԵ ԱՐՁԱՆԻԿ

ԱՐՄԵՆՈՒՀԻ ՊԵՏՐՈՍՅԱՆ

2013 թ. ամռանը Վաղարշապատ քաղաքից ոչ հեռու գտնվող Աղավնատուն գյուղի տարածքում պեղվող դամբարանադաշտից հայտնաբերվել է քնար նվագող կնոջ թրծակավե արձանիկ (նկ. 1, 2, 3)[1]: Գտածոն ունի 12 սմ բարձրություն: Դեմքի վրա հազիվ նշմարվում են աչքերը, քիթն ու բերանը: Բավական սխեմատիկ նշված են մազերը: Կինը երաժշտական գործիքը բռնել է ձախ ձեռքով, իսկ աջով նվագում է[2]: Աջ թևը բավական արտահայտիչ է պատկերված: Գոտկատեղը, դիմային կողմից նայելիս, նեղ է: Հագուստի տակից թույլ նշմարվում են ծնկները: Ստորին մասը կոտրված է այն հատվածում, ուր ավարտվում է երկար հագուստը, որի պատճառով էլ ոտքերը չեն պահպանվել: Ետևից երևում են նաև լրացուցիչ մշակման հետքեր: Դրանք արված են ստեկայով (փայտե կամ ոսկրե գործիք)՝ վերից վար ընթացող արագ շարժումով, որի արդյունքում մակերեսի վրա առաջացել են թույլ արտահայտված երիզներ: Արձանիկը լավ թրծված է և ունի վարդագույն երանգավորում: Ընտրված կավի և ավազի շփոթի մեջ երևում են համեմատաբար խոշոր ավազահատիկներ, որի պատճառով արձանիկի արտաքին տեսքը կոպիտ է. ուժեղ թրծումից այն տեղ-տեղ ճաքել է: Կաղապարի մեջ ձևավորվելուց հետո այն թույլ մշակման է ենթարկվել՝ հագուստի ծալքերը կողքերից և ներքևից ցույց տալու համար:

Արձանիկի վրա վերից վար նշմարվում են հետևյալ ցայտուն գծերը: Կնոջ գլխին աշտարակաձև թագ է կամ գլխարկ՝ գլխավերևից դեպի ներքև իջնող թույլ արտահայտված քողով[3]: Կնոջ աջ թևն ուսից մինչև արմունկ՝ քնարի հետ անկյունագծով նույն ուղղության վրա է: Հավանաբար, այն նախապես ներկված է եղել: Այդ են վկայում ձախ ոտքի ստորին կողային մասում և ետնամասի ստորին կեսին երևացող դեղնավուն անգոբի կամ ներկի հետքերը[4]: Ներկը

---

[1] *Արձանիկը պահվում է Էջմիածնի պատմաազգագրական թանգարանում (ինվ. -5605/2): Երախտագիտությունս եմ հայտնում հնագետ Ա. Բոբոխյանին՝ արձանիկի գոյության մասին տեղեկություն հայտնելու համար: Հոդվածը գրելու ընթացքում քննարկումների և օգտակար խորհուրդների համար երախտապարտ եմ հնագետ Հայկ Հակոբյանին, Հասմիկ Սարգսյանին՝ գծագրի և Ա. Ազարյանին՝ արձանիկի մաքրման աշխատանքների ու արժեքավոր դիտողությունների համար:*

[2] *Սովորաբար նման երաժշտական գործիքը պահում են ձախ ձեռքում, իսկ աջով նվագում են (հմմտ.* М. М. К о б ы л и н а. Терракотовые статуэтки Пантикапея и Фанагории. М., 1961, с. 105*):*

[3] *Նմանատիպ թագ է կրել աստվածուհի Կիբելեն. տե՛ս* М. М. К о б ы л и н а. Изображения восточных божеств в Северном Причерноморье в первые века н. э. М., 1978, с. 58, 60–61.

[4] *Հնարավոր է նաև, որ դա եղել է ներկանյութով գունավորված անգոբի քսուք:*

պատրաստելիս օգտագործվել է փշրված ու փոշիացրած ոսկոր: Կնոջ ձեռքին եռանկյունաձև ուրվագծերով դեպի վեր սրացող շրջանակով քնարն է: Բավական լավ ընդգծված են կնոջ կոնքերը: Թույլ գոգավորությամբ նրբորեն տրված է անցումը իրանից դեպի ոտքերը: Նրա հագին երկար հագուստ է՝ խիտոն կամ պեպլոս, որը պետք է ծածկեր ոտքերը:

Արձանիկը դիտվել է դիմացից, քանի որ ետնից այն բոլորովին արտահայտված չէ: Հավանաբար, ժամանակին եղել են արձանիկի բազմաթիվ կրկնօրինակներ, քանի որ կաղապարից հանված այն գեղագիտական առումով այնքան էլ տպավորիչ չէ և պետք է կարծել, որ կորցրել է հեղինակային կաղապարի վրա եղած նրբությունները: Նրա վրա կարելի է տեսնել երաժշտական գործիքի մի կարևոր մանրամասն: Այն ունի ցցուն շրջանակ, սակայն լարերը որևէ կերպ գործիքի վրա արտահայտված չեն: Կինը գլուխն ուղղել է քիչ դեպի ձախ ու վեր, և միայն ձախ կիսադեմի վրա է որոշակի երևում վերևից իջնող գլխաշորի եզրը:

Նկ. 1. Նվագող կնոջ թրծակավե արձանիկը՝ ետնամասից:

Նկ. 2. Նվագող կնոջ թրծակավե արձանիկը՝ առաջնամասից:



Նկ. 3. Նվագող կնոջ թրծակավե արձանիկի գծագիրը:

Անտիկ աշխարհում լայն տարածում ստացավ և զարգացման բարձր մակարդակի հասավ կորոպլաստիկան՝ թրծակավե արձանիկների արտադրութ-

յան արվեստը[5]: Հելլենիզմի դարաշրջանում (մ. թ. ա. III–I դդ.) կորոպլաստիկայի ծաղկումը պայմանավորված էր դեկորատիվ «զանգվածային» արվեստի զարգացումով[6]: Հայաստանում այն լայն տարածում է գտել ուշ հելլենիստական շրջանում (մ. թ. I–II դդ.)՝ իր գեղարվեստական արժանիքներով և պատրաստման եղանակով խիստ տարբերվելով նախորդ շրջանների օրինակներից[7]: Այդ արձանիկները պատրաստվում էին միփեղկանի կաղապարի մեջ՝ փափուկ կավը շերտ-շերտ սեղմելու եղանակով: Արձանիկների հակառակ երեսները հարթեցվել են ստեկայով, իսկ թրծելիս հեշտ չորանալու և չճաքելու համար տակից արվել է փոսիկ, որի խորությունը պայմանավորված է արձանիկների հաստությամբ[8]:

Հայաստանում հայտնաբերված կավե արձանիկները կենցաղային կամ պաշտամունքային բնույթի են: Դրանց հիմնական օրինակներն ի հայտ են եկել Արտաշատի դամբարանադաշտում և միջնաբերդում ու թվագրվում են մ. թ. I–II դդ.[9]: Արձանիկները պատկերում են աստվածների, հերոսների, մարտիկների, քրմերի, երաժիշտների, կենդանիների՝ ինչպես առանձին, այնպես էլ խմբակային հորինվածքով[10]: Մեզ հետաքրքրող խնդրին մասնավորապես առնչվում են կանացի արձանիկները (կինը կամ աստվածուհին երեխայի հետ՝ քնար կամ սազ նվագելիս, ջուրը մտնելուց առաջ հանդերձանքը հանելիս)[11]: Դրանք պատկերում են երկու տեսակի երաժշտական գործիք՝ քնար և փոքր բնով սազատիպ վին կամ ջնար հիշեցնող երաժշտական գործիք[12]:

Մշակման առումով Արտաշատի երաժիշտների կավե բոլոր արձանիկներն էլ չափազանց կոպիտ են: Լավ մշակվածությամբ առանձնանում է հարավարևելյան դամբարանադաշտից գտնված քնար նվագող կնոջ արձանիկը[13]: Այս արձանիկի քթի կառուցվածքը միանգամայն տարբերվում է հունական դասական քթից, այն մի փոքր արծվաքիթ է: Այստեղ ակնհայտ է հռոմեական դիմաքանդակային արվեստի ազդեցությունը, ուր հաճախ հանդիպում են ազգային հատկանիշներով օժտված տարբեր դիմաքանդակներ: Ուշագրավ է նաև արձանիկի հարթ գլխաշորի ձևը, որը հայերի կենցաղում պահպանվել է առ այսօր: Ըստ իրենց բովանդակության՝ կավե այս արձանիկները պատկերել են տեղի երաժիշտներին[14]:

---

[5] Б. Н. А р а к е л я н. Арташат I. Ереван, 1982 , с. 44.

[6] И. Т. К р у г л и к о в а. Античная археология. М., 1984, с. 62–63. *«Կորոպլաստիկա» բառը առաջացել է հունարեն «կորա» աղջիկ և «պրասսո» ծեփել, կերտել բառերից:*

[7] *Բ. Ն. Ա ռ ա ք ե լ յ ա ն. Հին Արտաշատ, Երևան, 1975, էջ 38, Ժ. Դ. Խ ա չ ա տ ր յ ա ն. Հայաստանի անտիկ շրջանի կորոպլաստիկան.– ՀԽՍՀ ԳԱ «Լրաբեր հասարակական գիտությունների», 1977, -5, էջ 37:*

[8] *Ժ. Դ. Խ ա չ ա տ ր յ ա ն. Հայաստանի անտիկ շրջանի կորոպլաստիկան, էջ 37:*

[9] *Ժ. Դ. Խ ա չ ա տ ր յ ա ն. Արտաշատ II, Երևան, 1981, էջ 169–170, Բ. Ն. Ա ռ ա ք ե լ յ ա ն. նշվ. աշխ., էջ 39:*

[10] Б. Н. А р а к е л я н. Указ. раб., с. 44.

[11] *Ժ. Դ. Խ ա չ ա տ ր յ ա ն. Արտաշատ II, էջ 170, Բ. Ն. Ա ռ ա ք ե լ յ ա ն. նշվ. աշխ., էջ 39: Արտաշատից հայտնի է նաև մի մերկ կնոջ արձանիկ, որը նվագում է ջքնար՝ կրծքին սեղմած (հմմտ. Բ. Ն. Ա ռ ա ք ե լ յ ա ն. Ակնարկներ Հին Հայաստանի արվեստի պատմության, Երևան, 1976, էջ 76):*

[12] Б. Н. А р а к е л я н. Очерки по истории искусства древней Армении, с. 75.

[13] *Ժ. Դ. Խ ա չ ա տ ր յ ա ն. Հայաստանի անտիկ շրջանի կորոպլաստիկան, տախտ. III:*

[14] *Ժ. Դ. Խ ա չ ա տ ր յ ա ն. Հայաստանի անտիկ շրջանի կորոպլաստիկան, էջ 47:*

Ընդհանրապես երաժիշտներ պատկերող կավե նման արձանիկներն անտիկ շրջանի կորոպլաստիկայի սիրված թեմաներից են և հայտնի են Տիգրիսյան Սելևկիայից, Ֆանագորիայից[15], միջինասիական հուշարձաններից: Հայաստանից գտնված երաժիշտների կավե արձանիկներն ավելի մոտ են արևելյան տիպերին[16]:

Հնագիտական տվյալները վկայում են, որ Հայաստանում երաժշտական գործիքները հայտնի են դեռևս մ. թ. ա. III–II հազարամյակից[17]: Դրանց մեջ առկա են նաև քնարի կամ տավիղի պատկերներ[18]: Նվագող կնոջ պատկերներ հանդիպում են նաև ուրարտական մետաղյա թիթեղների վրա[19]: Երաժշտական գործիքների մասին բազմաթիվ վկայություններ են պահպանվել հայ միջնադարյան գրավոր աղբյուրներում, մանրանկարներում ու պատկերաքանդակներում: Այսպես, Փավստոս Բուզանդը խնջույքի ժամանակ Պապ թագավորի սպանության տեսարանը նկարագրելիս ի թիվս այլ գործիքների (թմբուկ, սրինգ, փող) հիշատակում է նաև քնարը. «…Պապ համարէր ի միտս իւր թէ ի պատիւ ինչ նորա զայն առնիցեն… Իբրև ընդ գինիս մտին, որպէս զառաջին ուրախութեանցն նուագն մատուցին արքային Պապայ, և առ հասարակ թմբկահարք և սրնգահարք և փողահարք իւրաքանչիւր արուեստօք պէսպէս ձայնիւք բարբառեցան»[20]: Քնարի և ջնարի մասին հիշատակում է նաև Թովմա Արծրունին՝ հայ զինվորների՝ արաբ զորավար Բուղայի դեմ պատերազմի համատեքստում. «…նշանս կանգնեալ և փողք և քնարք հնչէին և թմբուկքն դափէին»[21]:

Մի շարք հիշատակություններ կան նաև վինի (ջնարի) մասին: Բուզանդը գրում է. «Ապա յետ մահուան Ներսիսի յորժամ զմեռեալսն լային, փողովք և փանդռօք և վնօք զկոծսն պարուցն լաքաւելով, զտիգսն հատեալս…»[22]: Մովսես Խորենացին վկայում է, որ խնջույքի ժամանակ Խոսրով Գարդմանացին հարբած վիճակում հետամուտ է լինում «ջնարահար քաջամատն կնոջ». «Դարձեալ երբեմն ի խնջոյս ուրախութեան Խոսրով Գարդմանացի ի գինւոջ զեղխեալ առաջի Շապհոյ՝ զօրէն սեղեխի տուփեցելոյ զհետ ջնարահար քաջամատն կնոջ կրթէր»[23]: Գրիգոր Մագիստրոսն էլ գրում է, որ Ծառում լալկան ջնարահարները խմբով քաջի գովքն էին անում[24]: Այս տեղեկությունները վկա-

---

[15] М. М. К о б ы л и н а. Терракотовые статуэтки Пантикапея и Фанагории, с. 105.

[16] *Ժ. Դ. Խ ա չ ա տ ր յ ա ն. Հայաստանի անտիկ շրջանի կորոպլաստիկան, էջ 49:*

[17] *Է. Խ ա ն զ ա դ յ ա ն. Հայկական հին երաժշտական գործիքները.– «Աշխատություններ» Հայաստանի պետական պատմական թանգարանի, հ. 5, Երևան, 1959, էջ 62 և հետո;* Z h. D. K h a c h a t r y a n. Representations of Music on Armenian Terracottas and Toreutics (Second Millennium B. C. – Third Century A.D.), Imago Musicae XVIII/XIX, 2001/2002, pp. 85–98.

[18] *Ա. Բ ո ր ո խ յ ա ն. Բրոնզեդարյան Հայաստանի երաժշտական գործիքները.– Շնորհ ի վերուստ. առասպել, ծես և պատմություն, Հոդվածների ժողովածու նվիրված Սարգիս Հարությունյանի 80-ամյակին, Երևան, 2008, էջ 241–242:*

[19] *Ե. Գ ր է կ յ ա ն. Կինն Ուրարտուում. Ուրարտուի թագուհիները.– Շնորհ ի վերուստ. առասպել, ծես և պատմություն, էջ 208:*

[20] *Փաւստոսի Բիւզանդացւոյ Պատմութիւն հայոց, Թիֆլիս, 1912, էջ 348:*

[21] *Թովմա Արծրունի Պատմություն Արծրունյաց տան, Երևան, 1985, էջ 208:*

[22] *Փաւստոսի Բուզանդացւոյ Պատմութիւն Հայոց, էջ 343:*

[23] *Մովսեսի Խորենացւոյ Պատմութիւն Հայոց, Տփղիս, 1913, էջ 410:*

[24] *Գրիգոր Մագիստրոսի թղթերը, Ալեքսանդրապոլ, 1910, էջ 209–210:*

յում են, որ քնարն ու ջնարը բավական ընդունված են եղել հայկական նվագարանների շարքում և հնչել են տարբեր առիթներով:

Ամփոփելով կարող ենք ասել, որ Աղավնատան արձանիկը հունահռոմեական ոճի լայն տարածում ստացած «նվագող կնոջ» արձանիկների կրկնօրինակներից է, սակայն, ամենայն հավանականությամբ, պատրաստվել է Հայաստանում, և առկա զուգահեռների միջոցով թվագրվում է մ. թ. I–II դդ. ՝ լրացնելով հին Հայաստանի երաժշտական հարուստ մշակույթի մասին առկա տվյալների շտեմարանը:

ОБНАРУЖЕННАЯ В АГАВНАТУНЕ ТЕРРАКОТОВАЯ СТАТУЭТКА МУЗЫКАНТА

АРМЕНУИ ПЕТРОСЯН

Р е з ю м е

Летом 2013 г. на территории могильника у села Агавнатун, недалеко от города Вагаршапата, была найдена терракотовая статуэтка женщины, играющей на лире. Она дополняет наши сведения об уже известных античных статуэтках Армении. Учитывая технические особенности и иконографические параллели из Передней Азии, можно предположить, что она относится к I–II вв. н. э. Возможно, статуэтка была изготовлена в одном из ремесленных центров Армении.

A DISCOVERED TERRACOTTA FIGURINE OF A MUSICIAN IN AGHAVNATUN

ARMENUHI PETROSYAN

S u m m a r y

In the summer of 2013 a terracotta figurine of a woman musician playing on lyre was accidently found in the territory of necropolis near the modern village of Aghavnatun, not far from Vagharshapat. It adds our knowledge towards such figurines known from antique sites of Armenia. Technological features as well as series of iconographic parallels from the Near East help us to deduce that it dates back to the 1st–2nd centuries A. D. The statuette was probably produced in one of the handicraft centres of Armenia.